

Լեվոն — է, դուն ս'ի ես, անունդ բսե :

ԵՐԿ. ՓԱՆՈՍ — (Բարձր) — Փանոսն եմ, է՛, Փանոսը...

Լեվոն — (Զարմացած) — Ի՞նչպես թե Փանոսը:

ԵՐԿ. ՓԱՆՈՍ — Հա՛, հա՛: Փանոսն եմ, Արզարի ախպերը, Ասլանի աղան, Հակոբի թուր, բու հոգու ընկերը:

Լեվոն — (Շփոթված) — Չհասկցա: Հապա սա մարդը ս'ի է:

ԵՐԿ. ՓԱՆՈՍ — Նա՛...

ՓԱՆՈՍ — Լեոն ջան, ես էլ եմ Փանոս, բայց բո փնտրած Փանոսը սա է:

Լեվոն — Ի՞նչ կրեսես... (Նայելով երկրորդ Փանոսին) — Փանոս, վայ Փանոս ջան (նետվում է դիրկը):

ԵՐԿ. ՓԱՆՈՍ — Նոր դլխի ընկա՛ր (կրկին համբուրվում են Աստղիկին) — շնորհակալ եմ քեզանից, աղջիկ ջան

և ձեզանից... Դե, խնդրում եմ անով-անգով բռշեր մեզ մտա:

ՓԱՆՈՍ — Չէ, էսօր դուր իմ հլուրն եր:

Լեվոն — Քույրս, աս ի՞նչ եղավ...

ԵՐԿ. ՓԱՆՈՍ — էդ էլ դու մտածիր:

Լեվոն — Հասկցա... (Զգացված) — Շատ, շատ շնորհակալ եմ: Ես, երեկվա կիսակենդան մարդս, նոր, այստեղ զգացի մարդկային արժանապատվությունը: Այո, ձեզ մոտ մարդը իրօր որ ամենամեծ դանձն է: Ահա կնայես ձեզ, Բախտավորյաններուդ ժպտացող դեմքերին ու կրկին անդամ կզգամ, թե որքան բախտավոր եմ ես սա մեծ սովետական ընտանիքում:

Վ ա ր ա դ ու լ ը

### ԱՆԴՐԱՆԻԿ ՔՈԶԱՐԻ ՖՈՏՈԳՐՈՐԾԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

**Օ**րերս Երևանի Արվեստի Աշխատողների տանը բացվեց Եզիպտոսից Հայրենիք վերադարձած Անդրանիկ Քոչարի ֆոտոնկարների ցուցահանդեսը, որը շարժեց կինոաշխատողների, նկարիչների, բնագետների բուն հետաքրքրությունը:

Բացման հանդեսին ներկա էին Հայաստանի ժողովրդական նկարիչներ՝ Մարտիրոս Սարյանը, Հակոբ Կոչոջանը, սեսպուրլիկայի ժողովրդական արտիստ, կինոռեժիսյոր՝ Հ. Բեկնազարյանը, գեղարվեստական պատկերասրահի դիրեկտոր, գիտության վաստակավոր գործիչ Ռ. Գրամբյանը և շատ ուրիշներ:

Ցուցահանդեսը ցույց տվեց Ա. Քոչարի՝ Սովետական Հայրենիքում կատարած աշխատանքների բեղմնավորությունն ու գեղարվեստականությունը: Նրա ցուցադրած 83 ֆոտոգործերից և ֆոտոէտյուդներից 55-ը նվիրված են Հայրենիքին, 8-ը նատյուր-մորտեր են, 6-ը կենդանիների լուսանկարներ և միայն 15-ը՝ արտասահմանի կյանքից:

Անդրանիկ Քոչարը ոչ միայն գիմանկարի, այլև պեյզաժի վարպետ է: Նրան հաջողվում է նաև նատյուր-մորտը:

Ա. Քոչարի ստեղծագործության առանձնահատկությունը, որ առավել պայծառությամբ դրսևորվել է նրա սովետական շրջանի գործերում, այն է, որ նա ձգտում է ֆոտոկամերան օգտագոր-

ծել ոչ թե գեղանկարչությունն ու գրաֆիկան ընդօրինակելու համար, այլ գնում է արվեստի՝ լուսանկարչությանը հատուկ ինքնուրույն ուղիով:



Գարեհանային զարթոճ



Երևանի Կոմերիամիության անվան պարկում

Այդ այնպես ակնառու չէ նրա դիմանկարային գործերում, թեև այստեղ էլ այն զգացվում է: Բայց այդ առանձնապես աչքի է ընկնում պեղծաներում և էտյուդներում: Նա կարողանում է գրտնել բուն կետք, բնորոշ դետալի անսպասելի ուկուրսով ջոկել ամենագլխավորը: Չի կարելի օրինակ, մոտանալ այն դիմակները երկաթե ցանկապատերի վրա, որոնց միջով տեսնվում է Սպենդիարյանի անվան Օպերային թատրոնի ճակատը: Ա. Քոչարը լուսանկարում է Բաղրամյան փողոցի շինարարությունը: Փողոցը տեսանելի է դեռ իր տեղը չդրված բետոնի հսկայական խողովակի միջից: Նավը ծով է դուրս գալիս: Մենք այնքան չենք տեսնում բուն նավը, որը հեռանկարում վեր է ածվել մի կետի, որքան ջրի հարթության վրա նրա թողած փրփրող հետքը: Մի շարք էտյուդներում,

Հայկական մանրանկարչության արվեստագետ Ա. Գուրնովա

ինչպես օրինակ՝ «Ծառը ձմռանը», — կամ «Աշնանային ծառերը», Քոչարը լուսանկարում է ոչ թե ամբողջ ծառը, այլ միայն մերկացած, տերևաթափ ճյուղերը երկնքի ֆոնի վրա: Հազիվ թե գեղանրկարչության մեջ կամ գրաֆիկայում այդ հեռաբերքի լինելը, բայց լուսանկարչության մեջ այդ մեծ տպավորություն է թողնում:



Աշնանային տեսարան





Երևանի կենդանաբանական այգում

Քոչարը միանգամայն նոր կողմից է ցուցադրել Արարատը: Այն լուսանկարված է Արագածից— Բյուրական գյուղից: Թանձր ամպեր են կախվել Արարատի վրա: Մենք նրան տեսնում ենք դաժան, համարյա այնպես, ինչպես նա երևում էր հազար-

ամյակներ առաջ: Ոչ մի թուփ, ոչ մի ծառ չի զարդարում պեյզաժը, առջևում քարերն են, իսկ Արարատի վրա կախված ամպերը: Այսպիսի Արարատ դեռ չի եղել ոչ լուսանկարչության և ոչ էլ գեղանկարչության մեջ: Հիանալի է Քոչարի «Հայրենադարձների տնակը»: Բուն տունը լուսանկարված է հեռվից, առջևում ծաղկող պարտեզն է, ծաղիկներ: Նրանք աչքի են խփում և մենք հասկանում ենք, որ այստեղ լուսանկարչի համար կարևոր է ոչ թե բուն կառուցումը, այլ այն շրջապատող բնությունը, Հայրենիքը:

Ա. Քոչարը հետաքրքիր է լուսանկարել Ալավերդու պղնձաձուլական գործարանը: Այդ լուսանկարը հանված է բերկրալի, ուրախ շեշտերով, ի տարբերություն մշտապես մռայլ գույներով գեղանկարչական այն նկարների, որոնցով անմիջապես կարող ենք իմանալ ծանր ու դաժան աշխատանքի մասին կապիտալիստական երկրներում:

Քոչարը հետաքրքիր գործեր ունի, որ կատարել է արտասահմանում՝ «Սովետների խաղը», «Նեգրի գլուխը» և ուրիշներ: Սակայն այդ բոլորը այնպես բերկրալի, այնպես պայծառ չեն, ինչպես Հայրենիքում կատարած գործերը: Արտասահմանում կատարած այդ գործերում Ա. Քոչարը ավելի շատ է սթեյտ է, քան մի մարդ, որ ակտիվորեն ընկալում է իրականությունը:

Համոզված ենք, որ հաջորդ ցուցահանդեսին, որը ամբողջապես նվիրված կլինի արդեն Սովետական Միության մեջ կատարած աշխատանքներին, Ա. Քոչարի ստեղծագործության առանձնահատկությունը կգտնի իր լիակատար գործադրումը: Հայրենիքում կատարած նրա ակտիվ աշխատանքը և գեղագետի նրա անվիճելի տաղանդը մեզ հիմք են տալիս հավատալու դրան:

Գ. Ր. ՉԱԽԻՐՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու